

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏՈՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան դիմ 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:
Ստանդին նամակները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն անգլագրատուն մէջ:

Օտարապետացիք պիմում են ուղղակի
Դաքա. Քեդակա «Մուսա»

Խմորապատուկը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարում ընդունվում է ամեն կիսկով:

Յայտարարութիւնների նամակը գնորդում են
խորանայն րոտին 2 կոպեկով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դատաստանը թագաւորապանների վրա: Նամակ խմորապատուկ: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Սորա-ժՈՐԵՆ» լրագրի թղթակցութիւնը: Գերմանիա: Նա-մակ Պարսկաստանից: Արտաքին լուրեր:—ՀԵ-ՌԱԳԻՐՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՐ:—ԲԱ-ՆԱՍԻՐԱԿԱՆ: Դաւիթ Բէկ:

ՆԵՐԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱՍՏԱՆԸ ԹԱԳԱՌԱՍՏԱՊԱՆՆԵՐԻ ՎՐԱ

Վիսների ցուցումներից երևաց, որ երբ որ մարտի 1-ին թագաւորը անցնում էր կառքով Եկատերինսկան ջրանցքի մօտ, մի անյայտ մարդ գցեց ինչ որ սպիտակ բան, որ ձիւնի գունտի նման էր, թագաւորի կառքի տակ: Գրանից առաջացաւ մի սարսափելի ծայթիւն, կայսրի կառքը փնտրեց և ձիւնները կանգնեցան: Թագաւորը դուրս եկաւ կառքից: Այդ ժամանակ յանցաւորին, որ կամենում էր փախչել, բռնեցին մի քա-նի բանւորներ և ծովային զինուորները: Պրէօբրաժէնսկան գունդի մի զինուոր մօտեցաւ յանցաւորին և հասցնելով նրան մի հարուած գլխին տեսց. «Այդ ի՞նչ էք ա-նում»: Յանցաւորը պատասխանեց. «Խնդ-րեմ մի՛ խփէք ինձ, դուք տգէտ մարդիկ էք և վերջը կը հասկանաք մենք ինչ ենք անում»: Կայսրը կառքից դուրս գալով մօ-տեցաւ յանցաւորին և գիմելով նրան բռն-նող մարդիկներին հարցրեց: «Սա է՞ գցել ուսմբը»: «Այո՛, ջերդ Մեծութիւն», պա-

տախտանեցին վիսները: Երբ թագաւորը մի քանի քայլ հեռացաւ, մի այլ անյայտ անձն դուրս գալով ամբողջ, որ հաւաքվել էր, շտապով մօտեցաւ նրան, և ինչ որ մի բան գցեց նրա ոտքերի տակ: Առաջացաւ մի աւելի սարսափելի ծայթիւն, քան թէ առաջինը և վիսները ոչինչ չը կարողացան որոշել ծուխի միջից: Նրանցից մի քանիսը ուշաթափ ընկան: Երբ ծուխը անցաւ, մի սարսափելի տեսարան ներկայացաւ վիսների աչքերին. Կայսրը կիսապառկած էր ջրանցքի պաշտպանի մօտ, առանց դատկի և վերաբ-կուի, արեւնաթաթախ: Գնդապետ Գլոր-ժիցիի նոյնպէս պառկած էր Կայսրի մօտ և վիրաւորված էր: Նա վերկացաւ և սկսեց օգնել Կայսրին վերելնալու: Այդ ժամանակ հասաւ Մեծ իշխան Միքայէլ Նիկոլայեւիչ, հեռուից ծայթիւնի ձայնը լսելով: Կայսրը արտասանեց. «Ցուրտ է, ցուրտ է»: Երբ կապիտան Ֆրանկ առաջարկեց տանել թա-գաւոր Կայսրին մօտակայ տունը, նրան բժշկական օգնութիւն հասցնելու համար, թագաւորը արտասանեց. «Տարէք պալատը, այնտեղ կամենում եմ մեռնել»: Թագաւոր Կայսրին նստացրին Գլորժիցիու սահնակը, որովհետեւ բարձրագոյն կառքը փնտրված էր և տարան պալատը:

Նախագահը դիմելով առանձնապէս վը-կաներից իւրաքանչիւրին հարցնում էր. ար-դեօք վեց մեղադրվածներից չեն կարող ցոյց տալ որն էր, որ առաջին ծայթիւն վիսները ցոյց տուեցին Ռիսակովի վրա: Երբ որ Կայսրին տարան, եղեռնագործու-

թեան տեղից սկսեցին հաւաքել միւս վի-րաւորվածներին, որոնց բոլորին էլ տարան հիւանդանոցներ: Նրանցից մի քանիսները նոյն և հետեւեալ օրը մեռան: Այդ մեռ-նողների թուում կար և այն մարդը, որ եր-կրորդ ուսմբ էր գցել և սպանելով թա-գաւորին ինքն էլ մահամեծ վիրաւորվեցաւ ծայթիւնից: Նա միւս օրը մեռաւ Կանիւ-չենսկան հիւանդանոցում, առանց յայտնելու իր ազգանունը:

Պրօկուրօր Մուրավիով սկսեց իր մեղադ-րական ծառը նրանով որ յայտնեց որքան ծանր և նշանաւոր խնդիր է վիճակված ի-րան: Հարտար կերպով նկարագրելով մար-տի 1-ի եղեռնագործութիւնը, այն ճնշող զգացմունքը, որին ենթարկված է ուստաց ամբողջ հասարակութիւնը, պրօկուրօրը ա-ւելացրեց որ ամբողջ Ռուսաստանը վրէժ-խնդրութիւն է պահանջում կատարված չարագործութեան համար և անհամբերու-թեամբ կամենում է իմանալ ովքեր են յան-ցաւորները: Այդ պահանջմանը պրօկուրօրը կարող է բուսականութիւն տալ, այդ հար-ցիկին զրական պատասխան տալ: Եւ ձեռ-քով մատնացոյց անելով դէպի մեղադրված-ների նստարանը, պրօկուրօրը բացականչեց. «Ահա թագաւորապաններ»: Անցնելով ե-ղեռնագործութեան մանրամասն նկարա-րութեանը, պրօկուրօրը բացատրեց այն օր-գանական կազմը, որոնք կային մեղադ-րվածների միմեանց մէջ: Բխակով և նրան նման ուսմբ գցող այլ անձինք, ուրիշ բան չէին, եթէ ոչ գործիքներ յանցաւոր ձեռնարկութեան: Գործի գլուխը, կառա-

վարող ոյժը՝ ձեռնարկը էր, իսկ նրա կա-ւանաւորութեանց յետոյ, նրա բացակայու-թեամբ՝ նրա տեղը բռնեց Սօֆիա Պերսիւ-կայա, որ և դարձաւ կարգադրիչ ոյժ մոտ-գրված թագաւորապանութեան մէջ: Պրօ-կուրօրը հաստատեց որ մարտի 1-ի եղեռ-նագործութիւնը կատարվեցաւ 11 անձինք-ների ձեռքով, որոնք յանցաւոր դիտաւո-րութիւնը գլուխ բերելու համար իրանց մէջ դերերը կամ պաշտանները բաժանված ունէին: Նրանցից վեց հոգի մեղադրված-ների նստարանի վրա են, երկուսը մեռան, որոնցից մինը սպանիչ ուսմբ գցողն էր, իսկ երկրորդը Նավոցկին էր, որ անձնա-պանութիւն գործեց, երբ պոլիցիան մտաւ Գլխմանի տունը: Յանցաւորներից երեք հոգի միայն դեռ ևս բռնված չեն: Բոլոր մեղադրվածները կապված են միմեանց մէջ ընդհանուր և ամբողջ կապերով: Նրանք բո-լորն էլ ունեն նոյն յատկութիւններ և պատկանում են նոյն սօցիալական-շրջապա-նական ուղղութեանը: Նրանք բոլորն էլ իրանց մտքի պրօպագանդայի համար գործ են դնում տպագրական խօսք, սպանիչ գոր-ծիքներ, ունեն յիշատիւնական անցեալը և իրանք էլ խոստովանվում են իրանց յանցա-ւոր գործունէութեան մէջ: Պրօկուրօրը օ-գուտ քաղելով նոյն իսկ մեղադրվածների խոստովանութեանց, նկարագրում է նրանց անցեալ յեղափոխական գործունէութեան ամբողջ պատկերը, ցոյց տալով որ Նիկոլայի մէջ, 1879 թ.ին, կայացած յեղափոխական ժողովը վճռողական ներգործութիւն ունե-ցաւ կուսակցութեան վերջնական կազմա-

ԴԱՍԻԹ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Մ Ա Ա Ն Վ Է Պ

(1722—1728)

Բ.

Միջ-Մահմադ-խանը արեւելով Սպահանին, Պարսկաստանի արեւելեան մասը ամբողջապէս ընկաւ աղանդների իշխանութեան ներքոյ: Իսկ արեւմտեան մասում, որի հետ և Հայաստանում, այդ ժամանակ կատարեալ անիշխանութիւն էր տիրում: Թէև աթոռադուրի Դահ-Յուսէյնի որդի թահմադ-Միջքան, Սպահանի պաշարման միջո-ցում, գաղանի փախչելով դէպի Մաղանդարան, իրան պարսից թագաւոր Տարաթափեց, և այն-տեղից գալով Ատրպատական, երկրաշարժու-թիւնից քայքայված թաւրիքը իրան աթոռա-նիստ քաղաք ընտրեց, բայց նրա ուժերը այն-քան թույլ էին, որ հազիւ թէ կարող էր այդ երկրները պահպանել: Մտածելով, թէ իր բոլոր դժբախտութիւնների պատճառը հայերն են, թէ նրանք առաջնորդեցին աղանդներին, թէ նրանք միացած են իր թշնամիների հետ, թահմադ-Միջքան, որ այժմ կոչվում էր Դահ-Թահմադ, կամեցաւ իր լեգիոններով իրան թոյնը թափել թաւրիքի հայերի վրա, հրամայելով նրանց բոլո-րին կոտորել: Բայց նրա Յովհաննէս անունով հայազգի ժամադործը, որ շատ սիրելի էր թա-գաւորին, ամուրեք նրա բարկութիւնը և ազա-տեց հայերին մի մեծ կոտորածից:

Բոլոր հանգամանքները նպաստում էին Պարս-կաստանի բաժան-բաժան լինելուն և նրա իս-պառ կործանմանը: Այդ հանգամանքներից օ-գուտ քաղելով, երկու աւելի հզօր պետութիւն-ներ՝ օսմանցիք և ուսմանցիք՝ աշխատում էին իրանց ձեռքը գցել Պարսկաստանի արեւմտեան

մասը, որ դեռ ազատ էր մնացել աղանդների տիրապետութիւնից: Ռուսաց թագաւոր Պետրոս մեծը աչք ուներ Կասպից ծովի հարաւային եղեքի ամենաբարեբեւ նահանգների վրա: Գլ-լանը և Ռաշտը արդէն ուսմանցիք ձեռքումն էին: Իսկ օսմանցիքը մտածում էին տիրել պարսկական Հայաստանին, որպէս զի արդեն ուսմանցիք իրանց տահմաններին մօտենալը:

Ի՞նչ էին մտածում այդ ժամանակ հայերը, ինչ էր մտածում ամենից շատ հաւանված, ամե-նից շատ տանջված, ամենից շատ հարստահար-ված ժողովուրդը:— Հայերը նոյնպէս անտար-բեր չէին. նրանք ևս պատրաստվում էին ձգել պարսկական ծանր լուծը, որ դարեւրով ճնշել էր նրանց: Բայց նրանք մտածում էին, թէ ի-րանց պէտք է մի հովանաւորող ձեռք, մի ար-տաքին զօրեղ պաշտպանութիւն: Այդ պատճա-ռով ամենի աչքը դարձած էր դէպի Պետրոս մեծը:

Պարսկաստանի հայերը շատ հին ժամանակ-ներից յարաբերութիւններ ունէին ուստաց ար-քունքի հետ, իսկ Ալէքսէյ Միխայլովիչ թա-գաւորի օրերում նրանց յարաբերութիւնները աւելի կանոնաւոր ձև ստացան: Սպահանի հա-նդկա-եւրօպական վաճառականութեան մէջ, ոչ սակաւ անգամ ուղարկում էին իրանց պատ-ւիրակներին ինչեւթ թագաւորի մօտ, կապում էին նրա հետ զանազան առեւտրա-կան գործեր և ստանում էին նրանից զանազան ար-տօտութիւններ իրանց Ռուսաստանի վրայով դէպի Եւրոպա կատարած վաճառականութեան վերաբերութեամբ: Ամեն անգամ երբ հայոց պատուիրակները յայտնվում էին ուստաց ար-քունքի մօտ, բերում էին իրանց հետ թանգազին ընծաներ. դրանցից մէկն էր այն գեղեցիկ բաղկա-թոռը, շինված արծաթից և ոսկուց, զարդարած խոշոր արմատներով, եղբայրութեամբ, մարգա-

րիտներով ու ֆէրուզաներով, որը Սպահանի մի առեւտրական ընկերութեան կողմից Խօջա-Ջա-քար Սահադիանցը մատուց Ալէքսէյ Միխայ-լովիչին: Բայց վաճառականական յարաբերու-թիւններից, Սպահանի հայերը ուսմանցիքի արեւ-լեան քաղաքականութեան մէջ նոյնպէս մեծ դեր էին խաղում: Նրանք շատ անգամ լինում էին միջնորդներ ուստաց արքունիքի և պարսից իրան մէջ, պայմաններ էին կապում և վճարում էին այլ և այլ խնձաված գործեր:

Պետրոս մեծի թագաւորութեան ժամանակ Պարսկաստանի հայերի յարաբերութիւնները ուստաց արքունիքի հետ աւելի ևս ամրապնդվե-ցան: Մեծ թագաւորի նախորդները գտնում էին հայերի մէջ աւելի առեւտրական ընդունակու-թիւններ և նրանց ձեռքով կամենում էին վա-ճառականութիւնը Ռուսաստանում զարգացնել: Իսկ Պետրոս մեծը, բայց այդ ընդունակութիւն-ներից, դատա հայերի մէջ բոլոր այն յատկու-թիւնները, որ կարող էին նպաստել նրան իր աշխարհակալութիւնները դէպի արեւելք տարա-ծելու: Կասպից ծովի վրա լուծում էին հայերի բարձրակարգ ծանր զինքները ամբողջ արդիւնա-բերական աշխարհը նրանց ձեռքումն էր: Հընդ-կաստանի բոլոր նշանաւոր առեւտրական կենտ-րոններում նրանք ունէին կալօնիաներ: Զուա, Սուստրա և Փիլիպեան կղզիների վրա նրանք տեղափոխվեցան դեռ XVI-րդ դարու վերջի-րում, իսկ Մաղարաի, Կալիպաի, Բոմբայի, Սինդապուրի մէջ Դահ-Սպահան մեծի մահից յետոյ: Ամեն տեղ նրանք առեւտր ունէին ոչ միայն ժողովրդի հետ, այլ գլխաւորապէս ժողովրդի իշխողների հետ, որոնց ձեռքում հաւաքվում էր երկրի հարստութիւնը որպէս հարկերի փոխա-նորդ: Բիրմանիայի արմաղը, որ սեպհականու-թիւն էր միայն թագաւորի, ծախվում էր հայերի ձեռքով: Պարսկաստանի մետաքսը, որ ստանում էին թագաւորները, բոլորը հայերի ձեռքով էր

տարվում դէպի Եւրոպայ: Անդադար յարաբերու-թիւններ ունենալով թագաւորների և դանազան-երկրների իշխանների հետ, հայերը այն աստիճան մոտրմանցի էին նրանց հետ, այն աստիճան հաւա-տարմութիւն էին դառն նրանց մօտ, որ ծանօթ էին նրանց բոլոր թույլ կողմերին, գիտէին նը-րանց բոլոր գաղտնիքները: Այդ առիթ էր տա-լիս հայերին երբեմն մեծ դերեր խաղալ արեւելքի իշխողների միմեանց հետ ունեցած յարաբերու-թիւնների մէջ, մանաւանդ որ այդ իշխողները նրանց փողին, խելքին և օգնութեանը միշտ կարողութիւն ունէին: Պետրոս մեծի արծու-աչքերից չէր կարող աննկատել մնալ այդ իրո-ւթեանը և նա աշխատեց իր ձեռքը ձգել հա-յերին:— արեւելքի այդ ամենաշարժար բանալին:

Հայերը ցոյց էին տալիս ամեն տեսակ պատ-րաստականութիւն մեծ թագաւորի մեծ նպատակ-ները իրագործելու համար: Բազում և Կասպից ծովի հարաւային եղեքի վրա գտնված պարս-կական երկրները—Ռաշտը, Գլխանը, Մաղանդա-րանը,—այդ կիտրոնների, ձիթների, մետաքսի և վարդենիների աշխարհը տիրեց նա զլաւարա-պէս հայերի առաջնորդութեամբ: Հայերը նրա պիտի երբ դարձան ամեն տեսակ գործողու-թիւնների մէջ: Հաշտարխանում նստած էր որ-պէս հայոց հոգևոր առաջնորդ, բայց խաղապէս որպէս ուստաց պատերազմական գործակաւոր, Մինաս վարդապետը: *) Նրա հաւատարմաւորը Պետրոս Գլխան Վրանեցի հայազգին: *) Նրա-

*) Մինաս վարդապետը հնդկաստանի նշանա-ւոր հայ իշխան Դարաշէ Օրբի հետ գնաց Ռու-սաստան դեռ 1701 թ.ին և մասնակցում էր ուստաց կառավարութեան հայոց ժողովրդի հետ ունեցած բանակցութիւնների մէջ: Վերջը նա ստացաւ Ռուսաստանում բնակվող հայերի արք-եպիսկոպոսութիւնը:

*) Պետրոս Գլխան Վրանեցի ինչպար-ձակ և խիստ հետաքրքիր օրագրութիւնը, որ կազմված էր 1722 և 1723 թ.ականներում պրօ-

կերպութեան վրա, ներշնչելով նրա մէջ տէրորիստական ուղղութիւնը և այդ ժողովի մէջ զծագողիցաւ թագաւորասպանութեան դիտարկութիւնը: Այդ բազմաթիւ սկզբում է գործունէութեան այդպէս աւաճած դիւնաւի տակաւն պերիօդը: Պրահայի իւրօրը համարում է ժելիաբովին ազդեցութիւն ունեցող գործիչ և առաջնորդ յանցաւոր գործունէութեան, որի հետեւանքն եղաւ մարտի 1-ի եղեռնագործութիւնը: Բիսպովին պրոկուրորը համարում է ժելիաբովին աշակերտը միայն, այն ինչ ինքն ժելիաբովին, Մուրավիովի կարծիքով, դաւադրող-շեղափոխականի մի կատարեալ տիպ է: Սօֆիա Պերովսկու մասնակցութեան աստիճանը գործի մէջ ցոյց տալուց յետոյ, պրոկուրորը խոստովանելից որ մարդու բարոյական զգացմունքը հրաժարվում է հաւատալ, որ մի կին ընդունակ լինէր այդքան սառնութեամբ և ցինիկով առաջնորդել արեւնահեղ ձեռնարկութեանը և զայն նայել ու զմայլել իր յանցաւոր ծրագրի կատարված իրողութեան հետեւնքով: Մեղադրական ճառի վերջին մասը նուիրված էր այն կուսակցութեան վարդապետութեան մանրամասն քննութեանը, որ իրան անուանում է «ուս սօցիալիստական-շեղափոխական կուսակցութիւն»:

Մուրավիովի ճառը տեւեց մօտ վեց ժամ: Մեղադրական ճառից յետոյ խօսեցին հինգ մեղադրվածների պաշտպանները: Նշանակաւոր էր, որ քանի որ ինքնուրուի կատարեցին այն պաշտօնը որ տէրութիւնը յանձնել էր, նրանց ժելիաբովին քնն իրան էր պաշտպանում և խօսեց մի ժամ:

Պրոկուրորը չուզեց պատասխանել պաշտպանութեանը: Մեղադրվածներին թոյլ տրվեցաւ ասել վերջին խօսքը: Գատարանի վճիռը արդէն յայտնի է ընթերցողներին, մեր լրագրում ապաված հեռագիրներին:

Երբ Ռաշտում և Պարսկաստանի ու առհասարակ արեւելքի բոլոր նշանաւոր անցքերի մասին տեղեկութիւններ էր տալիս Սարգիս վարդապետին, որը իր կողմից հաղորդում էր ուստաց կառավարութեանը, Վարաբովին մէկընդմիջ ընդհատեց իր խօսքը: Նա հանգստացրեց յայտնի ձեռքով: Երբ ուստները տիրեցին Գերբեհովին և Բագուին, Վարաբովին մէկընդմիջ առաջարկում էին Պետրոս մեծին 60,000 զինված մարդիկ առաջարկում էին իրանց աջակցութիւնը տիրելու ոչ միայն այժման (Սարգիս-Վարաբովին) այլ ամբողջ Սարգիսական: Նրանք խնդրում էին միայն մի քանի փոքր զինուոր 2000 ուստ զինուորներ, որ խոստանում էին իրանց ծախքով պահել: Միայն թէ կարողանային ազատվել պարսից լծից և քրիստոնէայ մեծ թագաւորի հովանաւորութեան ներքոյ ունենային իրանց անկախ ինքնակառավարութիւնը: Այդ բոլոր ծառայութիւնները փոխարէն հայերը ստանում էին միայն ապարդիւն խոստանքներ և նրանց իւրօրը էին տալիս զեռ և սպանել:

Բայց հայերի յարաբերութիւնները ուստների հետ այն աստիճան ակնհայտ և աշխարհայ էին դարձել, որ այլ ևս չէր կարող ծածուկ մնալ պարսից կառավարութիւնը: Եւ այդ աւելի կատաղեցնում էր պարսիկներին, երբ պարզ տեսնում էին, որ հայերը առաջնորդում են իրանց թշնամուն՝ «մոսկովներին» թագաւորին՝ Պարսկաստանի Գ. Պատկանանը: 1870 թ.ին հայերէնից ուստներն թարգմանելով, ներկայացրեց Ս. Պետրոբուրգի կայսերական ակադեմիային: Օրագրութիւնը լուսարանված է գիտական պրոֆէսոր ծանոթութիւններով և կցած է սկզբին ընդարձակ պատմական ներածութիւն թարգմանչի կողմից:

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐԻՆ

Սաղեան 31 մարտի

Գարսի աշակերտները նուիրեցին 3 լուրջ յօդու «Միացեալ ընկերութեան»:

Նշանակաւ ժողովի 22 լուրջ որ սրա հետ ուղարկում է խոսադրութեանը և խնդրում հասցնել ուր հարկն է:

Յարակցում մտնում և նուիրատուների ցուցակը:

Բարեկրօն Սահակ քահանայ Բծանեանց 1 ռ., Գովհանէն Բծանեանց 1 ռ., Բարութիւն Միկիթարեանց 1 ռ., Խաչի Մարգարեանց 1 ռ., Մովսէս Փալաշեանց 1 ռ., Խաչի Վլասեանց 1 ռ., Բարութիւն Վարդանեանց 1 ռ., տ. Խուրդա Ամիրխանեանց 1 ռ., տ. Թադուհի Վլասեանց 1 ռ., տ. Սոնա Տէր-Սահակեանց Բծանեանց 1 ռ., տ. Լիզա Խաչիկեանց 1 ռ., Գանիէլ Փալաշեանց 70 կ., բարեկրօն Պետրոս քահանայ Տէր-Սալապարեանց 50 կ., Թոմաս Տէր-Բարութիւնեանց 50 կ., Խաչիկ Զաքարեանց 50 կ., Թափաշէ Աւետիքեանց 50 կ., Թադէոս Խաչանեանց 50 կ., Բալթո Սահակեանց 40 կ., Գիմարի Վլասեանց 40 կ., Նիկողայոս Վլասեանց 40 կ., Գուրի Վլասեանց 40 կ., Պետրոս Բարսեղաբեանց 36 կ., Բարութիւն Սարգսեանց 30 կ., Սամսոն Տէր-Բարութիւնեանց 25 կ., Կիւրբեղ Ղուկասեանց 25 կ., Գալուստ Մեարգիւնեանց 25 կ., Արտեմ Բարսեղաբեանց 25 կ., Սամսէլ Ղուկասեանց 25 կ., Զամբարեանց Աղապուրեանց 25 կ., Մկրտիչ Վարդանեանց 25 կ., Առաքել Ղուկասեանց 25 կ., Գարրիէլ Շարահանեանց 25 կ., Զհուգ Միքայիլ-Խոսեֆօղլին ճանադարձաբեանց, Բալթո Բաղդասարեանց 20 կ., Վանիկա Միկիթարեանց 20 կ., տ. Աննա Բարսեղաբեանց 20 կ., տ. Զարաֆիլ Միկիթարեանց 20 կ., տ. Մարգարէ Դաւիթեանց 20 կ., տ. Խանում Տէր-Սահակեանց 20 կ., Ներսէս Սարգսեանց 15 կ., Կարապետ Վարդանեանց 20 կ., Ուսումնարանի աշակերտները 74 կ., 1 լուրջ էլ եւ:

Մկրտիչ Աթաբեկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարը վերջինն է, որ հրատարակում ենք Զատիկի տօնից առաջ: Հետեւեալ համարը կը հրատարակենք ապրիլի 16-ին, հինգշաբթի օրը:

Ապրիլի 14-ին, երեքշաբթի օր, 10 ժամին առաւօտան լինելու է Արմենու թատրոնում «Հայրենի գրքերի» հրատարակութեան ընկերութեան» ընդհանուր ժողովի նիստը:

«Մշակի» մէջ տպուեցաւ յայտարարութիւն, որ Ռաֆֆիի «Ինքնութիւն» անունով վիպասանութիւնը վաճառվում է թիֆլիսում այս և այն պարտի մօտ: Թէ և այդ գրքի տպագրութիւնը վերջացած է, բայց տակաւին թիֆլիսում ստացված չէ, այս պատճառով յայտնում ենք պ. պ.

տանը տիրելու: Չանապան տեղերում սկսվեցան խիստ հաւածանքներ նրանց դէմ: Երանի նահապետ մինչև անգամ հրամայեցաւ կոտորել բոլոր հայերին: Համարանցի Աստուածատուր կաթողիկոսի եռանդաւ միջնորդութիւնը հայի կարողացաւ ազատել նրանց: Նա հանգստացրեց Շահ-Թահմինին բաւական գումար նրան ընծայ տալով և հաւատացնելով, թէ ինքը և իր ժողովուրդը ամենին ապագայութեան նպատակներ չունեն և պարսից հաւատարմի հպատակներ են: Իսկ այդ խօսքերը միայն ժամանակաւոր կերպով կարողացան միամտացնել պարսիկներին: Երբ պարսից կառավարութեան պատգամաւորները յայտնեցան Վարաբովին ապստամբութեան զըլխաւորներին մօտ խոստանում էին նրանց առատ փող, ընդարձակ երկրներ և պատիւներ, միայն թէ նրանք ցած դնեն իրանց զէնքերը և չօգնեն ուստներին: Այսպէս պատասխանեցին հայոց մեկընդմիջ: «Մեղ պէտք չէ ձեր փողը, երկիրը և պատիւները: Մեղ ոչինչ պէտք չէ: Մենք ձեզ համաչել անգամ չենք կամենում: Մենք հաւաքվել ենք միմ կայսրի և թագաւորի (Պետրոսի) կամքով և մեր յայտը դրել ենք նրա վրա: Մենք նրա մարդիկն ենք: Եթէ նա Աստուծոյ օգնութեամբ կը դադարէ մեր կողմը, մենք կը միանանք նրա հետ և կը կատարենք բոլոր ինչ որ նա մեզ կը հրամայէ: Բայց եթէ, Աստուած մի արասցէ, մեծ կայսրը չի գալ մեր կողմը, և ոչ մի կարգադրութիւն չի անի մեր մասին, և կը մոռնայ իր խեղճ ծառաներին, այն ժամանակ մենք կը ցրվիմք ամեն մէկս դէպի մի կողմ: Իսկ պարսից շահը թող չը երեւոյայէ, որ մենք երբ և ինչ կը խնայեմք նրան:»

Ամենքը հաւատացած էին, որ Պետրոս մեծը հաւատաւ դիտաւորութիւն ունի Վարաբովին և Արարատեան աշխարհի հայերին ազատել պարտութիւնը: Պետրոս Գիւրգիս Գիւրգիսեանց:

գնդերին սպանել մինչև ինչեւ վիպասանութեան թիֆլիսում ստացվելը, որը իր ժամանակին կը յայտնվի:

«Голосъ» հաղորդում է որ ժողովրդական լուսաւորութեան նոր միջնորդ, բարձր Նիկոլայի, ընդունելով իր ստորադրեալներին, յայտնեց նրանց որ միշտ կը պահպանվի օրինական հողի վրա, երբեք զուրս զաւու չէ օրէնքների սահմաններից, թէ և կընդունի իր օգնականներից ամեն տարբեր գաղափարներ, որոնք նշանակաւ համաձայն կը լինեն օրինականութեան հետ:

«Русский Курьеръ» լրագրին գրում են Վարսից որ այդ նահանգում յայտնվել է մի տարափոխիկ ախտ որ մեծ զոհեր է անում: Թղթակիցը աւելացնում է որ աչքի առջև ունենալով Փոքր-Ասիայի մէջ տարածված ժանտախտի մասին լուրերը, լաւ կը լինէր շուտով հետազոտել Վարսի նահանգում յայտնված հիւսնադութեան բնաւորութիւնը:

«Голосъ» լրագրում կարդում ենք հետեւեալը: Գալիցիայում, Աւստրիայում, Կոսովա ամառ քաղաքում հրատարակվող «Старобудецъ» առասաց լիւրով թերթը հաղորդում է իր թէ ըստաօրրեալների անուանված ուստ աղանդին պատկանողները ուստաց Բեսարաբիայից սկսած են դաղթել կրկին դէպի Ռումինիա կամ Դուբուշա, յայտնելով որ կրօնի ազատութիւնը չը վայելելով Ռուսաստանում, նրանց դուրսից իրանց հայրենիքում անտանկի է դարձել: Բեսարաբիայի այն մասի մէջ, որ Բերլինի կոնգրեսի վճռով Ռումինիայից կտրվեցաւ և միացվեցաւ Ռուսաստանին, բնակվում են մօտ 30,000 ստաօրրեալներ, որոնցից կէսից աւելի այժմ կրկին դաղթել են ուղղւած դէպի Ռումինիա:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

„ПОРЯДОКЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂՍԱՅՈՒԹԻՆԸ

„Порядокъ“ լրագրի մէջ կարդում ենք հետեւեալ թղթակցութիւնը Կ. Պօլսից: Եւրօպական թագաւորներին ոչ մէկի մահը, մինչև անգամ սպանութիւնը չէր կարող Արեւելքի մէջ այնպիսի ծանր տպաւորութիւն գործել, ինչպիսի տպաւորութիւն գործեց Կայսր Ալեքսանդր II-ի սպանումը: Դրա պատճառն այն է, որ Ռուսաստանը Թուրքիայի դարեւոր ռիւսիմ թշնամի է համարվում: Այդ պատճառով Կայսր Ալեքսանդրի մահուան լուրը հաղորդող հեռագիրը Կ. Պօլսի մէջ մեծ, բայց զանազան տպաւորութիւն գործեց քրիստոնեաների և

միջ լծից և նրանց անկախութիւն շնորհել: Բանակցութիւնները հայոց ժողովրդի և ուստաց կառավարութեան մէջ այդ հարցի մասին կատարվում էին հարկատուների հայազգի իշխան Խրաթէ Օրբի միջնորդութեամբ, զեռ այն ժամանակ, երբ տակաւին Սպանիա առնված չէր ազատեցնել:

Երբ Պետրոս մեծը ուղարկեց Սպանիա պարսից Նահ-Զուսէին մօտ մի գեապանութիւն, այդ Խրաթէ Օրբին գեապանախմբի ղեկաւորն էր: Գեա գեապանութիւնը պարսից մայրաքաղաքը չէր հասած, Շամախու խանը հաղորդեց Շահին, թէ այդ Օրբին պիտի վերականգնէ հայոց թագաւորութիւնը, թէ ժամանակը հասել է, որ հայերը պիտի ազատվեն պարսից իշխանութիւնից: Այդ տեղեկութիւնները մեծ տպաւորութիւն գործեցին Սպանիանում: պարսիկները աստիճան վերջով վեցան, իսկ տեղային հայերի ուղարկութեանը չափ չը կար: Շահ-Զուսէինին յայտնի լինելով Պետրոս մեծի պատերազմական ձգտումները, միւլեանդ մօլդաների խորհրդով, մինչև անգամ չէր կամենում ընդունել այդ քրիստոնէայ գեապանութիւնը: Բայց կայսրի անունը այն աստիճան տարափ էր արածել Պարսկաստանում, որ Շահը սկսեց ընդունել գեապանութիւնը: Այդ օրից Հայաստանի անկախութեան խնդիրը միօրինակ դրադեցնում էր ամեն կողմերում տարածված հայերին:

Սպանիա և Զիգլաստանի հայերը, թէ և հեռու էին հայրենի երկրից, բայց այնքան ուղարկված էին իրանց եղբայրների ազատութեան դաւաքարով, այնքան անձ էր նրանց բաղձաւոր անկախ Հայաստան տեսնել, որ պարտաւոր էին յանձն առնել ամեն տեսակ զոհողութիւններ: «Գուր, գրում էին նրանք Սիւնեայ աշխարհի, ապստամբութեան պիտիւն, սիրտ ունեք և քաջութիւն, իսկ մենք փող ունենք և միջոցներ

մահմետականների վրա: Առաջինները զարհուրած էին, մինչդեռ երկրորդները ժողովուրդ էին և նրանց շրթունքները աղօթքներ էին արտասանում Վօրանից, գոհուելիս յայտնելով Ալլահին, որ նա ազատեց մահմետականութիւնը իր ռիւսիմ թշնամուց: Այդ թիւից այնքան մեծահոգի չէր, որ խղճար եթէ ոչ մի օտար թագաւորին, զոնէ մարդուն: Երբ գեապանների ներկայութեամբ ուստաց գեապանատան եկեղեցու մէջ Ազատող Թագաւորի հոգեհոն գիտն էին կատարում, ոչ սուլթանը և ոչ Բ. Գուր չէին ուղարկել իրանց ներկայացուցչին: Ամենքը նկատեցին այդ անբաղաքավարութիւնը: Պարսից շահը ապացուցեց, որ նա այդ կողմից աւելի քաղաքավարի է, քան թէ բոլոր թիւրքերը, նրանց թեւում և Փարսիցի մէջ ուսում ստացողները:

Կառավարութեան հրամանով տեղական լրագիրներին արգելված էր մի բան տպել սպանութեան և մարդասպանների մասին: Ս. Պետրեբուրգի մէջ պատահած անցքը այնպիսի ծանր տպաւորութիւն գործեց սուլթանի վրա, որ նա անգաղար ուսմբելի, զինամիտ, թոյնի և դաշայնների վրա է մտածում: Նա վախեցնում է, որ մի յոյն ազգասէր, կամ Ֆանատիկոս չեքեզ կամ մի քիւրդ օրինակ չառնէ ուստ նիհիլիստներին և Ս. Պետրեբուրգի մէջ պատահած դրաման չը կրկնէ Բոսֆորի ափերի վրա:

Այդ խեղճ Արդու-Համիդը կատարեալ բռնաւոր կեանք է վարում: Առանձնաւորով Բաշկիտաշէի վրա տիրապետող բլուրը, նա ինչեւստ պալատը կատարեալ ամրոց է դարձրել, շրջապատել է նրան բարձր պատերով, զօրանոցներով, որոնք բնակեցրած են ոտքից մինչև զլուխ զինաւորված զօրքերով: Այդ զօրքերը ճշգրտութեամբ ստանում են իրանց ուժիկը, մինչդեռ երկրը պաշտպանող զինուորները զրկել կոտորվում են սովից և տարին մի կամ երկու անգամ են ստանում իրանց աննշան վարձատրութիւնը: Ս. Պետրեբուրգի մէջ պատահած անցքը այնպէս ազդեց սուլթանի

ձեզ օգնելու: Կուեցէք հայրենիքի ազատութեան համար, մենք ձեզ փող և զէնքեր կուղարկենք: Մենք կը դիմենք բոլոր քրիստոնէայ թագաւորների զոնքը, ձեզ համար կը բարեխօսենք: Մեր մարդիկը արդէն ուղարկել ենք Ֆրանսիայի և Մոսկովի թագաւորների մօտ:

Յարաբերութիւններ ունենալով Եւրօպայի նոյն ժամանակվայ բոլոր նշանաւոր առեւտրական կենտրոններին հետ, Սպանիա և Զիգլաստանի հայերին խիստ դիւրին էր Եւրօպայից զէնքեր տեղափոխել: Հայաստան: Նրանք ունէին կասպից ծովի վրա սեպական նաւեր: Եւ դեռ XVII-րդ դարու կիսում Մոսկովայի կառավարութեան հետ կապած դաշնագրութեան համաձայն, իրաւունք ունէին իրանց ապրանքները Ռուսաստանի վրայով անցկացնել:*) արանգիտի պայմաններով: Հայերին և կարապաղեցիները, որ սովոր էին ծանրաբեռնվել Կարապաղի ու Ասիայի հարաւորութիւններով, այդ ժամանակ զբաղված էին զէնքերի և զանազան ազգամարմինքի տեղափոխութիւններով: Շահալիդի վաճառականը, մոռացած արժաթի և ոսկու անապ բաղձաւոր, այժմ հրապարկած էր հայրենիքի ազատութեան սիրով: Այդ սիրը արեւել, մարդիկ էր նրա սիրաւ, և նա պարտաւոր էր նուիրել հայրենիքին բոլորը, ինչ որ ունի:

(Կը չարունակվի)

*) Ապրանքները տեղափոխվում էին հետեւեալ ճանապարհով: Սպանիայից Թուրքի և Շամախի, այնտեղից Կասպից ծովով Հայաստան: Իսկ Հայաստանից ցամաքային ճանապարհով Մոսկովայի վրայով տարվում էր Սիւնեայից: Այստեղից նաւերի վրա ուղարկվում էր Ստոքհոլմ, իսկ այնտեղից Հոլանդիայ, Անգլիայ, Գանիայ և այլ երկրներ: Նրանք վերադարձնում էին իրանց եւրօպական ապրանքները երբեք Ամստերդամի, Եվլեիայի միջով Ռուսաստան, Հաւտարիւն և Կասպից ծով: Նրանք յարաբերութիւններ ունէին Մարսելիայի և Վենիսի հետ, ուր սուրբ Մարկոսի հրապարակը լցված էր հայ վաճառականներով:

վրա, որ նա կրկնապատկեց պալատական պահապաններին թիւը և գրեթէ բոլորովին չէ գուրա գալիս պալատից: Նա չէ ուտում ոչ մի կերակուր, մինչև նրա համը չը տեսնէ մի առանձին պաշտօնային, որ այդ գործի համար է նշանակված: Ապագան ցոյց կը տայ, թէ այդ նախազգուշութիւնները արդեօք կազատեն սուլթանին Աբդուլ-Ազիզի կամ Մուրադի վիճակին ենթարկվելուց: Տխուր նախազգացմունք է տիրել այդ երկու զգալի սուլթաններին յաջորդին, թէ պէտ առաջինները աւելի յարգված էին իրանց հպատակներին:

Կարձեալ մի շարք մանցաւ և դեսպաններին բանակցութիւնները թիւրքաց հաւատարմատարներին հետ բաւականացուցէ հետեւեալները չունեցան: Արշիւն նիստի ժամանակ դեսպանները մի սահման նշանակեցին, որ որոշում էր այն զինուորներին ամենափոքրը, որոնք վճռված էին Բերլինի կօնֆերանցիայի ժամանակ: Եթէ միւս կողմից հոկտեմբերի 3-ի շրջաբերականի վրա հիմնված դեսպանների գրութիւնը անփոփոխ համարվի, կարելի է եղբայրացնել, որ բանակցութիւնները ոչինչ հետեւեալ չունենան և որ դեսպանները ձեռն համար միայն սահմանադիմ էին կազմում: Այսպէս թէ այնպէս լծողուն մեծ լրագիրների հաղորդութիւնները հեռու են իրականութենից: Նրանց հաղորդած լուրերը, իբր թէ յոյն թիւրքական վեճը վերջանում է և հելլենական կառավարութիւնը ստանում է թէսասոյիս և Նիսի կողմից, թանկացրին թիւրքաց արժէքովները: Այստեղ ստացված հեռագրի համեմատ յունական կառավարութիւնը յոյս չունի, որ հարցը խաղաղութեամբ լուծվի:

Առժամանակ երկու կողմերն էլ պատերազմի են պատրաստվում: Կառավարական նաւերը, անգլիական, աւստրիական և ֆրանսիական շոգենաւերը անբաժար տեղափոխում են պատերազմական պաշարներ և զորքեր: Պատերազմական միջոցառումներ կարգադրութեամբ 1 և 2 կարգի լեզիոններ ծառայութեան են կանչված: Ծովային միջոցառութիւնը վերջին պատերազմի ժամանակ նկատելով նուազորով անբաւականացուցիչ լինելը, չօքարտ-փաշայի առաջնորդութեամբ զբաղված է նախազգուշական միջոցների քննութեամբ տորպեդների դէմ: Չօքարտ-փաշա անգլիայի է թիւրքաց ծառայութեան մէջ և երեւելի է նրանով, որ վերջին ուսութիւնը պատերազմի ժամանակ շտապով փախաւ, անխնամ թողնելով Դունայի ամբողջ նաւատորմը:

Ասում են, որ չօքարտ-փաշա դիմել է անգլիական դեսպանին Ալէքսէի մէջ, խնդրելով տեղեկութիւններ տալ ցօնադատների պատերազմական պատրաստութիւնների մասին և պատասխան է ստացել, որ անգլիական թագուհու դեսպանը Ալէքսէից թիւրքաց պաշտօնային լրահաւ լինելու համար չէ գանձվում:

Ալէքսանդր III Կայսրի գահ բարձրանալը զբաղեցնում է թիւրքաց մամուլին: Արդեօք նոր թագաւորը Թիւրքիայի բարեկամ թէ թշնամի կը լինի: Արդեօք նա կը շարունակէ քրիստոնեաների ազատելու գործը Արեւելքի մէջ: Կրանից վախենում են մայրաքաղաքի մէջ հրատարակվող թիւրքաց լրագիրները և նրանցից ամենազլուսւորը «Վակիթ» յայտնում է, որ ընդհանուր ուշադրութիւնը դարձրած է Ռուսաստանի քաղաքականութեան վրա և որ եւրոպական խաղաղութիւնը շուտով կը խանգարվի: Թիւրքաց լրագիրը եւրոպական անուանում է վառօդի մի պահեաց, որի մէջ Ս. Պետեր-

բուրգի անցքը ընկել է իբրեւ մի այլովոր նիւթ:

«Թերջիմանի-Հակիկաթ» լրագիրը, որին զանազան ներշնչումներ է անում կառավարութիւնը, զաղտնի ձեռով պատմում է, որ թիւրքաց դեսպանը Բերլինի մէջ նշանաւոր տեղեկութիւններ է հաղորդել Բ. Կրանը եւրոպական նոր դաշնակցութիւններին մասին: Իբր թէ Պետերբուրգի մէջ պատահած յանկարծակի փոփոխութիւնները ստիպել են Գերմանիային այդ յայտնութիւններն անել Բ. Կրանը: «Հակիկաթ» հաւատացնում է, որ կոմս Հազֆելդը նոյնը հաղորդել է թիւրքաց կառավարութեանը: Այդ առակները ապացուցանում են, որ թիւրքերը Ռուսաստանի կողմից նոր զգալի գրութիւններին են սպասում և գեներալ Վիտթելի յետկանչը նրանց լաւ ապագայ չէ խոստանում: Ռուսաստանի դաշնակցութիւնը Անգլիայի հետ կորուստ կարող է պատճառել Թիւրքիային, որ իր յոյսը միշտ գրել է այդ երկու պետութիւնների անհամայնութեան վրա: Ահա թէ ինչից են վախենում թիւրքերը և ինչի վրա յոյս ունեն արեւելեան քրիստոնեաները:

Ձը նայելով սովորյալ մանաթողովի դովելի աշխատանքներին, Հայաստանը կատարելապէս աւերվում է սովից: Անգլիական մի հիւպատոս նորերում գրում էր հետեւեալը: Բնակիչները հաց առնելու համար ծախել են իրանց բոլոր ունեցածը, երկրագործական բոլոր գործիքները և մինչև անգամ իրանց քանդված տների սիւները և այժմ ոչինչ չունեն: Կրա վրա աւելացել է և մի այլ զգալի գրութիւն, ամբողջ Հայաստանի մէջ աւազակութիւնը մեծ չափերով է կատարվում շերտերից և քրեականից, Հայաստանի այդ ստարակներին: Կառավարութիւնը անընդունակ է ձնել աւազակութիւնը ոչ թէ միայն այդ հեռաւոր նահանգների մէջ, այլ և նոյն իսկ մայրաքաղաքի շրջանակներում: Չերեկները մինչ այն աստիճան աւազակութիւններ են անում Իսմիթի մէջ, որ ոչ ոք չէ համարձակվում Կ. Պոլսի դռներից հեռու գնալ: Կիւղերի մէջ հաղորդակցութիւնը ապահով չէ, որովհետեւ իւրաքանչիւր օր ճանապարհների վրա բազմաթիւ սպանութիւններ են կատարվում: Արմենի մէջ նոսահները նորերում պաշարել են հայոց մի երեւելի վանք, խել խելձ վարդապետների հացի պահեստները: Հայոց պատրիարքը դիմել է Բ. Կրանը, խնդրելով հրամայել նահանգապետներին, որ նրանք վերջ դնեն գործերի այդպիսի զրուծութեանը: Բայց նահանգապետները, եթէ ցանկանային էլ, անգոր են սանձահարել աւազակներին, որոնք իրանց կողպուած բաւական են թիւրք ստիճանաւորների հետ:

Բայց այդ նիւթը չափազանց ընդարձակ է և ինձ շատ հեռու կը տանէ: Հետեւեալ նամակով ես ցոյց կը տամ, թէ ինչպիսի անտեր են տանջում Թիւրքիային: Ձը նայելով իր ընդարձակութեանը և բնական հարատւութիւններին, նրան աղքատութիւն է վիճակված անտաքեր, անընդունակ, թոյլ, կաշառակեր և ֆանտոմիս վարչութեան շնորհիւ:

ԳԵՐՄԱՆԻԱ

Լրագիրներին Բերլինից հաղորդում են հետեւեալը: Ս. Պետերբուրգի մէջ կատարված եղեւնագործութիւնը ողբի կանգնեցրեց այստեղի պոլիցիային և ստիպեց նրան աւելի մեծ եռանդով հալածել սօցիալիստներին: Նորերում Բերլինից արտաքսվեցան 18 սօցիալիստներ, որոնցից չորսը պետական

բանտի մէջ մի քանի ամիս կալանաւորված էին, պետական դաւաճանութեան մէջ կասկածված լինելով, և նոր էին արձակված բարձր դատարանի կարգադրութեամբ: Մի և նոյն ժամանակ Գերմանիայի մէջ մի քանի տներում խուզարկութիւններ են արված և մի քանի մարդ կալանաւորված են, իսկ լայացիքի մօտ Մօկերնի մէջ պոլիցիան խուզարկից հետեւի գունդերի բոլոր զօրանցները, որովհետեւ տեղեկութիւն էր ստացված, թէ սօցիալիստները զինուորների մէջ աջոցութեամբ տարածում են իրանց հեղինակութիւնները: Բացի այդ լուր է տարածված, թէ պոլիցիան տեղեկութիւն է ստացել բոլոր երկիրների սօցիալիստների մէջ կապ լինելու մասին: Ասում են, որ կառավարութիւնը այդ առիթով նշանաւոր տեղեկութիւններ կը հաղորդէ պարլամենտին, երբ կառավարիչ պատերազմական զրութեան ժամանակամիջոցը աւելացնել և արտաքց կարգի օրէնքների ոյժը պահպանել: Պարլամենտի անդամներն էլ կամենում են հարցնել կառավարութիւնից, արդեօք նա մտադիր է միւս պետութիւններին առաջարկել ընդհանուր միջոցներ պետական և հասարակական կազմակերպութեան ընդհանուր թշնամիների դէմ և սահմանափակել զինամիտ արդիւնաբերութիւնը, կամ այնպէս կանոնաւորել, որ չարագործութիւններ չը գործեն Այդ հարցը կառավարութիւնից է ներշնչված և դրա հետ համաձայնել են բոլոր կուսակցութիւնների անդամները: Շատերը նկատում են, որ գերմանիայի արդիւնաբերութեան սահմանափակելը ոչինչ հետեւեալ չի ունենայ, որովհետեւ արդիւնաբերել իւրաքանչիւր մարդ, որ փոքր ի շատ է դիմել վարվել այդպիսի նիւթերի հետ և այն էլ ամենահասարակ գործիքների օգնութեամբ: Պարլամենտի անդամները վճռել են զիտուորապէս զինամիտ արդիւնաբերութեան վրա խօսել, իսկ միջազգային միջոցները երկրորդական դարձնել, որպէս զի այդ հարցը քաղաքական սուր բնուէրութիւն չը ստանայ: Գերմանական մամուլը շատ է զբաղված միջազգային միջոցների հարցով: քաղաքական ապաստանի վերաբերութեամբ: Մի քանի խմբագրութիւններ այն կարծիքն են յայտարարում, որ արդիւնաբերութեան վրա խօսելը, իսկ իրաւունքները անկարելի է ոչնչացնել, որովհետեւ միայն մարդասպանները չեն, որ օգուտ են քաղում նրանից: Բայց սպանութիւնը յանցանք է, ինչ ձեւ էլ նա ունենայ, և քաղաքական մարդասպանների դէմ էլ պէտք է միջոցներ գործ դնել: Լրագիրների կարծիքով, լաւ կը լինէր, եթէ պետութիւնները մի լօնդրեսի մէջ վճռէին, որ քաղաքական մարդասպանը սպանութիւն գործելուց և մի—այլ երկրի փախչելուց յետոյ պէտք է դատաստանի ենթարկվի այդ երկրի օրէնքների համեմատ այնպէս, իբր թէ յանցանքը այդ երկրի մէջ լինի կատարված: Ինչ կը վերաբերի յանցանքին կողմնակի կերպով մասնակցողներին, նրանց կարելի է յանձնել ֆեմալիստ պետութեանը այն պայմանով միայն, որ քննութեան և դատաստանի ժամանակ նրանք դեսպանների հովանաւորութեան տակ լինեն և եթէ ապացուցները յանցանքների դէմ բաւականացուցիչ չը լինեն, նրանք նորից վերագործվեն յանձնող պետութեանը: Այդ պիտով կարելի կը լինի կողմնապահութեան առաջն առնել և մի և նոյն ժամանակ բաւականացնել արդարութեան զգացմունքը:

ՆԱՄԱԿ ՊԱՐԼԱՄԵՆՏԻՑ

Կաթիլ, մարտի 21-ին

Հեռագիրը ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և Պարլամենտում գրեթէ ուսաց Ալէքսանդր ողորմած Կայսրի մասին: Կա մի ցաւալի կրօնատէր: Կաթիլի ուսական հիւպատոսի կամեցողութեամբ մի քաղաքի հայոց մայր եկեղեցում կատարվեցաւ հանգուցեալ Կայսրի տիկու հոգեհանգիստը ամսուս 6-ին: Հանգիստը ներկայ էին ուսաց հիւպատոս պ. Սուլթանիկին, հիւպատոսարանի առաջին թարգման պ. Կոստանովսկին, թիւրքաց, անգլիական և ֆրանսիական հիւպատոսները, Արքայապալանի նախնապետի տեղապահ Լէթմուր-ը-սէլիմին, մի քանի պարսիկ երեւելի գեներալներ և իշխաններ: Ներկայ էին նոյնպէս պարսից արտաքին գործոց նախարարի տեղապահ Մայիլը-մուլլը, եւրոպացի վաճառականները, այլ և բազմաթիւ տեղական և ուսանապատակ հայեր: Եկեղեցւոյ ձախ կողմը կանգնած էին Արամեան զպրոցի աշակերտները: Հանգիստը խիստ լաւ տպագորութիւն գործեց: Մաղթանքից յետ ս. Գրիգոր արքեպիսկոպոսը մի գրաւոր դամբանական կարգաց հանգուցեալ Կայսրի յիշատակին, հայերէն լեզուով, որից յետ եկեղեցական հանգիստ վերջացաւ:

Ներկայ տարւոյ մէջ, այն է օգոստոս կամ թէ սեպտեմբեր ամսին թիֆլիսում կը լինի մի ընդհանուր ուսուցչական ժողով (Կուստոստանի բոլոր հայաբնակ տեղերի ուսուցիչներից կազմված): Այդ ամենակարեւոր ժողովում, ինչպէս յայտնի է, կորչելին շատ և շատ մանկավարժական տարակուսանքներ, զպրոցական զանազան խնդիրներ պիտի պահանջեն համաժողով, այլ և զստաւարութեան ձեռք, երանակի և միտողի ամենադիւրի գործադրելի միջոցներ: Կը վճռվեն անշուշտ մի և նոյն ժողովում, զառաւանդելի առարկայից վերաբերութեամբ բարձրագույն օգտակար խնդիրներ, որոնք այնքան զգալի են դարձել մեր օրերում: Կը վճռվեն ի միջի այլոց հայերէն աշխարհարաւ լեզուի քերականական կանոններ, դոնէ ի մասնաւոր: Շատ ցանկալի էր, որ մի և նոյն ժողովում և որովհետեւ միտակցութեամբ ընդունվելով ընդհանուր բոլոր զպրոցների համար, որոնց մէջ առաջին տեղը պիտի զբաղեն անտարակոյս, պ. Տէր-Վահանգիյի Ա և Բ տարւոյց «Մարկի լեզու» դասագրքերը: Բարձր դասնախաղով պարտի այդ աշխատութիւնները իր տեսակի սէջ, ես միայն մի քանի նկատուածութիւններ եմ անում: 1. «Մարկի լեզու» դասագրքերը իւրաքանչիւր տարի նորից ապագորութեան յանձնվելով, շատ մեծ փոփոխութիւններ են ենթարկվում, որով գիտաւարանում են աշակերտաց միտակցութեանը: 2. Յարգելի հեղինակը լաւ կանէր որ առաջին տարւոյց դասագրքը աւելի զիւրաւանդելի լինէր, զառաւանդ մասնակցները գիտաւարանը բնակելի, օրինակ չսկսուց, զենդան, սկսեց: 3. Կայն, ինչպէս նրա երկրորդ տարին պէտք էր մաքրել մանկանց դժուարահասկանալի ոճերից: Թիֆլիս «Գեթի կարեւոր» և ուրիշ աղագիրներից: 3. Աւելի կարեւոր է և դիւրին դարձնելու համար, իմ կարծիքով, շատ յարմար կը լինէր, որ յիշալ գրքերի երկար պարբերութիւնները և գրքերի կարճացնելով կամ բաժանելով, ճիշտ օրական դասերը վերաճէր, իբրեւ մի աշակերտի միօրեայ դասնակի պաշար: Այդպիսով գործը աւելի կը դարձնար և աշակերտները աւելի կը սիրէին նրանց բովանդակութիւնները, որովհետեւ նոյն գրքերի այժմեան պարբերութիւններից ունենք վերջանում են միայն մի քանի տողերով և շատերն էլ վերջանում են 1, 2, 3, 5, մինչև անգամ 10 երեւանքով, առանց որոշ դասեր յատկացնելու: Հարկաւ այս իմ մի քանի տող նկատուածութիւններն էլ կրկնենք քննադատութեան տակ, որ շատ սպասելի է: Պարսկ. հեղինակը և նրա հետ ուրիշները սխալված չեն լինի եթէ համար ասեն, թէ մի մարդ որ ապրում է Պարսկաստանի մի անկիւնում, նա չէ կարող ունենալ լայն և ընդարձակ հայեցումներ, նա չէ կարող նայել այդպիսի լուրջ խնդիրներ վրա մանկավարժական ճիշտ տեսակետից: Շատ ուղիւ է, կը պատահանում, որովհետեւ ես իմ նկատողութիւններն արել եմ մեր երկրի մանկանց և մեր զպրոցների վերաբերութեամբ: Բայց այս ես կաւեղեցիւն, որ երբ մի մանկավարժ իր աշակերտները նուիրում է մանուկներին, նա ոչ թէ միայն ներկայի պէտք է ունենայ իր բնական տեղի կամ քաղաքի բարբառը և նրա մի քանի հարկաւաշակերտները, այլ բոլոր դաւաճանքի մասնակցները, մի խօսքով ընդհանուր շահը, նա պէտք է զբէ ընդհանուր համար, ուրմէ նա պէտք է չափազանց պարզապէս լինի, որպէս զի զանազան դաւաճանքի տարբեր քաղաքով խօսող բոլոր մանուկները կարողանային օգուտ քաղել նրա աշխատութիւնից: Կս սրա համար կը թերեւ մի օրինակ: Մեր քաղաքի Արամեան զպրոցում սովորում են տեղացի և զուգուցալ աշակերտներ, որ ընդունված են պ. Տէր-Վահանգիյի դասագրքերը: Ռուսացիք դատարանում նոյն գրքից դառնալով, անուշ և բացարձակ, տարակոյս չը կայ որ ուսուցչի լեզուն նոյն դասագրքի լեզուն է: Կս օրինակ: Արարատեան քաղաքում: Բայց ինչ էք անում, նրան ոչ թէ միայն դատաւարի աշակերտը չէ հասկանում, այլ տեղացի աշակերտները, որոնք մարդու աշխարհարաւ լեզուն խօսում են, զարձակ լաւ չեն հասկանում: Նրանցից մի նը հարցնում է, վարժապետ, զեթ ինչ է նշանակում և միւսը թէ Կարենայի ինչ է նշանակում: Ինչով բացատրել այս երկուքը—անպաշտ նորանով, որ առհասարակ, մեր զպրոցական գրքերը աշակերտաց հասկացողութիւնից և նրանց սովորական բարբառից խիստ բարձր են կանգնած: Հիշաւրի է, որ այդպիսի դէպքերում ուսուցիչը պէտք է շատ զգոյշութեամբ անէ,

